

որող մասում, — խնդրէր այնուհետև տալ պատերազմ ընդ օսմանցոց, և առաքեաց առ խանն Տուղալի՝ Քեղում, զՄխիթար հազարապետն և զտէր Աւետիսն՝ վաթսուն և վեց արամբ, և ասէ. «Եկ միաբանեալ տացուք պատերազմ ընդ օսմանցոց»: Եւ եկեալ գտին զխանն ի շէնն Քուրդաշեան, և պատմեցին նմա զբանն, բայց նա երկեաւ առնել զայն: Իսկ եղբայր նորա, խանն լե Քազում ջանայր հաւանեցուցանել: Եւ մինչդեռ ընդ այս վիճէին, զօրքն օսմանցոց եկեալ լցին զդաշտն Կեշեան»²¹:

Տեր-Ավետիսի պատմածը վերաշարադրելիս հայր Ղուկաս Ստեփանոսյանը որոշ շեղումներ ու աղավաղումներ է թույլ տվել, տեղանունը դարձրել է անձնանուն, մեկի անունը վերագրել է մյուսին, աղճատել է տեղանուններ, շփոթել բնակավայրերի տեղադրությունը և այլն: Անկասկած, որոշ աղավաղումներ հետևանք են այն բանի, որ պատմողն ու գրի առնողը իրարից խիստ տարբեր Սեբաստիայի և Ղարաբաղի բարբառների ներկայացուցիչներ էին: Սրանով հանդերձ, ձեռքի տակ եղած հայ և պարսկալեզու աղբյուրները հնարավորություն են տալիս վերացնելու աղավաղումներն ու ճշտելու բնագիրը:

Այսպես, մեջ բերված հատվածից պարզ երևում է, որ դաշնակցության առաջարկով Դավիթ-բեկը դիմել է Արաբսից հարավ, Դուզալի շրջանին տիրող Քյազում-խան Կարադաղուին²²: Պատվիրակներ Մխիթար-բեկին ու Տեր-Ավետիսը, 66 զինվորների ուղեկցությամբ, խանին հանդիպել են նույն շրջանում գտնվող Քյուրդաշտ գյուղում և հայտնել Դավիթ-բեկի պատգամը, որին խանը չի համաձայնվել, իսկ նրա եղբայրը աշխատել է համոզել Քյազում-խանին ընդունել այդ առաջարկը: Այնինչ, լավ չհասկանալով իր առաջին գրաման ժամանակ շարադրվածը, Ղ. Ստեփանոսյանը «Դուզալի խանը» ընկալել է որպես անձնանուն (Դուզ-Ալի) և ճիշտ չընկալելով կիսաբարբառային ձևով արտահայտված «և եղբայր նորա խանն լե Քազում ջանայր հաւանեցուցանել» խոսքը, համապատում բնագրում խանի եղբորը անվանում է «Լեքազի»²³: Մինչդեռ, պարզապես Ղարաբաղի բարբառում տարբեր իմաստներ արտահայտող «լե» կամ «լա» մակբայը այս դեպքում շեշտում է, որ խան ասելով ի նկատի ունի Քյազումին:

Եթե փորձենք անձնանուններն ու տեղանունները ճշտելով, արդի հայերենով շարադրել այս հատվածը, կստացվի այսպես.

«Արդ, երբ Դավիթը տեսավ, որ աստված օգնական է իրեն, այնուհետև ցանկացավ օսմանցոց դեմ պատերազմել, և Մխիթար հազարապետին ու տեր Ավետիսին 66 մարդով ուղարկեց Դուզալի խան Քազումի մոտ, որպեսզի ասեն նրան՝ «արի միաբանված պատերազմ մղենք օսմանցիների դեմ»: Նրանք խանին գտան Քյուրդաշտ գյուղում և ասացին իրենց խոսքը, սակայն նա վախեցավ այդ անել, իսկ նրա եղբայրը աշխատում էր համոզել Քազում-խանին: Եվ մինչդեռ նրանք վիճում էին այս հարցի շուրջ, օսմանյան զորքը եկավ լցվեց Կարճեանի դաշտը»:

Ըստ Տեր-Ավետիսի նախնական պատումի, միայն այն ժամանակ, երբ Մխիթար-բեկի հետ, իրենց 66 զինվորներով վերադառնում են Քյուրդաշտից և փախստական մեղրեցիներին հուսադրելով պատրաստվում են գիշերային հարձակումով դուրս ըջել Մեղրի մտած օսմանցիներին, Քյազում-խանը հիսուն զինվորից բաղկացած մի ջոկատ է ուղարկում, որոնց Մխիթարը թողնում է Մեղրիի վերին դարանում, հանձնարարելով առավոտյան մտնել քաղաք և մասնակցել ձեռնարկվելիք հարձակմանը: Սակայն նրանք ուշանում են, և երբ օսմանցիք, զգալով սպառնացող վտանգը փորձում են հեռանալ քաղաքից, հայերը հարձակվելով փախուստի են մատնում նրանց և սպանում հարկահանին և ապա խանի դարանամուտ զինվորների մասնակցությամբ հետապնդում են փախչող-

21 Պատմութիւն Ղափանցոց, էջ 137—138:

22 Մ ու հ ա մ ա դ Ք ա զ ի մ. հ. I, էջ 613:

23 Պատմութիւն Ղափանցոց, էջ 171: Առհասարակ «Դուզ-Ալի» և «Լեքազի» մահմեդական անձնանուններ գոյություն չունեն: